Պայմանագիր Հ/420-20 /«ՊՀԾ-ԱՇՀԾՁԲ-20/13

<26> նոյեմբեր 2020թ.

ք.Երևան

Մենք՝ ներքոստորագրողներս՝մի կողմից<պատվիրատու՝<Հայաստանի Հանրապետության Պետական Վերահսկողական ծառայություն>, ի դեմս՝ գլխավոր քարտուղար՝Ա.Բաղդասարյանի ( ), մյուս կողմից՝ <Տեխնիկական և Հրդեհային Անվտանգության Մասնագիտացված Ծառայություն> ՍՊԸ այնուհետև <սպասարկող>, ի դեմս տնօրեն՝ Լ. Բեգլարյանի, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1Սույն պայմանագրով սպասարկողը /ծառայություն իրականացնողը/ պարտավորվում է պատվիրատուի համաձայնությամբ մատուցել սույն պայմանագրի 1,2 կետում նշված ծառայությունները:

1.2 Սպասարկողը սույն պայմանագրով պարտավորվում է պատվիրատուի հաշվին մատուցել հետևյալ ծառայությունները՝

ա/ իրականացնել գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվացքի զննում,ծխաօդատար ուղիների քարշի ստուգում, որի բացակայության/խաթարված լինելու/ դեպքում ծխաօդատար ուղիների մաքրում/ ծխաօդատարի մաքրումը ընդգրկում է այն բոլոր աշխատանքները,որոնք անհրաժեշտ է կատարել ծխաօդատար քարշն ապահովելու համար, այդ թվում մաքրել ծխաօդատարները մեխանիկական եղանակով/ծանրոցի օգնությամբ/,ինչպես նաև վերացնել ցանկացած արգելք,բացառությամբ այն դեպքերի,որոնք կապված են ծխաօդատարի կառուցվացքային ամբողջության խաթարման հետ: Ծխաօդատար ուղիների նորոգման ,վերականգման կամ վերակառուցման,ինչպես նաև ՀՀ կառավարության 2004թ.հոկտեմբերի 29-ի թիվ 1843Ն և 2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 1083Ն որոշումներում հաստատված <Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ > տեխնիկական կանոնակարգով նախատեսված պարբերաբար կատարվող աշխատանքներն իրականացվում են ծխաօդատար ուղիների սեփականատիրոջ միջոցների հաշվին, ինչպես նաև, հիմք ընդունել Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի 2008թ.հոկտեմբերի 8-ի N539 Ն որոշման N 3 հավելվածը:

բ/ ստուգել օդափոխիչների, ծխատարերի և դրանց էլեկտրաշարժիչների փաստացի վիճակը և աշխատանքը;

գ/զննել կաթսաների որմնապատվացքի կամ երեսվածքի, պայթեցման կափյուրների, ձգափականների, սանդուղքների և անցումների սարքինությունը,ինչպես նաև կաթսայատան և նրա առանձին հանգույցների,չափիչ-հսկիչ սարքերի լուսավորվածությունը ու օդափոխիչ սարքերի աշխատանքը;

դ/ ստուգել կաթսաների տաքացման մակերեսը, կրակացանցերը, անհրաժեշտության դեպքում կատարել խարամի և մոխրի մաքրման աշխատանքներ,

ե/ստուգել օդափոխիչների և ծխաքարշերի էլեկտրաշարժիչների հողանցման սարքինությունը;

զ/ ստուգել հակահրդեհային գույքի առկայությունը/հրշեջ վահանակ,կրակմարիչներ,երկու տիպի՝ ածխաթթվային և քիմիական,ազդանշանային համակարգ/:

է/ իրականացնել բնական գազի օգտագործման անվտանգության կանոնների պահպանման, ծխաօդատար ուղիներից և հրդեհաշիջման սարքավորումներից անվտանգ օգտվելու հրահանգավորում՝ գազի տնտեսության անվտանգության նորմեր սահմանող տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

ը/ուսումնասիրել տարածքի հրդեհային անվտանգության համապատասխանելիությունը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2012թ.հուլիսի 26-ի N263-ն հրամանով հաստատված պահանջներին:

1.3 Ծառայությունները պարբերաբար կարող են մատուցվել սպասարկողի կողմից կամ պատվիրատուի պահանջով՝ըստ անհրաժեշտության, պայմանագրի կնքման պահից մեկ տարվա ընթացքում առանց լրացուցիչ վճար նախատեսելու, բացառությամբ սույն պայմանագրի 1.2ա կետում նշված դեպքերի;

1.4 Ծառայությունները մատուցված են համարվում սպասարկողի կողմից հասարակական և կենցաղային նշանակության /կրթության,առողջապահության,առևտրի,սննդի և այլն/ գազասպառիչ

համակարգերի ծխաօդատար ուղիների տեխնիկական վիճակի մասին թույլտվության ակտերի հանձնման պահից:
1.5 Ծառայությունները մատուցվելու են պատվիրատուի՝ ք.Երևան,Մաշտոց 47 հասցեում:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Սպասարկողը պարտավոր է ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ ամեն տարի միևնույն ժամանակահատվածում:
2.2 Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագիրը կնքելուց հետո 30 օրվա ընթացքում,ինչպես նաև 1.3 կետում նշված ժամանակահատվածում:
2.3 Պատվիրատուին ծանոթացնել գազամատակարարման պայմաններին ու հրահանգավորել ԳՄՕԿ-ի և համաձայնագրի պահանջներին համապատասխան:
2.4 Առանց սպասարկողի թույլտվության և ստուգման չփոխարինել նախագծով նախատեսված ծխաօդատար ուղիները, ինքնակամ չկատարել ծխնելույզների միացումներ, ձևափոխություններ և գազասպառիչ սարքերի տեղադրում:
2.5 Ապահովել սպասարկողի վկայագրով աշխատակիցների ազատ մոտեցումը ծխաօդատար ուղիներին, սպասարկումը կատարելու նպատակով:

3. Ծառայությունների արժեքը և վճարման կարգը

3.1 Պատվիրատուն կատարվող աշխատանքների և սպասարկման (ծառայության) համար վճարում է /78000/ յոթանասունութ հազար դրամ գումար, որի մեջ ներառված են հարկերը,
գումարը թվերով՝ գումարը տառերով՝
տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները :
Պատվիրատուն վճարումը կատարվում է Սպասարկողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ արձանագրությունում նշված ամսվա ընթացքում:
Վճարման ժամկետը չպահպանելու դեպքում, Պատվիրատուն պարտավոր է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել Պայմանագրով նշված գումարի 0.1%-ի չափով տույժ:
3.2 Պատվիրատուի կողմից հանձնարարված լրացուցիչ ծառայությունների կատարման համար, որոնք չեն նշված պայմանագրում, վճարվում է երկկողմանի համաձայնագրով:
3.3 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծավալված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կողմերի ցանկությամբ հանձվում է դատարանի քննությանը:
Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ մեկական օրինակ:

Սպասարկող՝	Պատվիրատու՝
<<Տեխնիկական և Հրդեհային	<Հայաստանի Հանրապետության Պետական
Անվտանգության Մասնագիտացված	Վերահսկողություն Ծառայություն>
Ծառայություն>> ՍՊԸ	Հասցե՝ ք.Երևան,Մաշտոց 47
Հասցեն՝ Ազատության 24-305	Բանկ՝ <<ՀՀ ՖՆ գործառնական վարչություն>>
ՀՎՀՀ 00168219	Հ/Հ՝90011021954
Հայէկոնոմբանկի Արաբկիր մ/ճ	ՀՎՀՀ՝ 00183253
Հ/Հ 163058808029	Հեռ.՝37491554465
Հեռ. (010)203739,091-36-17-14	
Էլ. փոստ THAMC.llc@mail.ru	

Տնօրեն՝ _____ /Լ.Բեգլարյան/
Կ.Տ.

Գլխավոր քարտուղար՝ _____ /Ա. Բաղդասարյան /
Կ.Տ.